ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թ.

№ 11 (1061)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 55-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԵՆՔ ՀԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ



ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԵՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ղեկավարությունը, աշխատակիցները, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողական խորհուրդը տարբեր ուղղություններով շարունակում են աջակցություն ցուցաբերել Արցախի պաշտպանության բանակին և արցախահայությանը: Այս համատեքստում դասախոսները և ուսանողները շարունակաբար օգնում են Արցախից Հայաստան եկած մարդկանց՝ բնակվելու վայրի, ինչպես նաև փոքրիկների ուսուցումը կազմակերպելու և հոգեբանական մասնագիտական աջակցություն ցուցաբերելու գործում:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը կարևորում է այս օրերին համալսարանի կողմից կազմակերպվող մարդասիրական տարբեր ձեռնարկները, որոնք կրում են շարունակական բնույթ:

Արցախցի դպրոցահասակ երեխաներին բուհը պատրաստակամորեն ներգրավում է ՀՊՄՀ հիմնական և ավագ դպրոցներում:

Մյուս կարևոր հարցը Արցախի պետական համալսարանի ուսանողներին բուհի ուսումնական գործընթացում ներգրավելու ծրագրի իրականացումն է, որին արդեն ձեռնամուխ են եղել համալսարանական ֆակուլտետների ղեկավարներն ու պրոֆեսորադասախոսական կազմը: Ծրագիրը հնարավորություն կտա արցախցի ուսանողներին՝ իրացնել կրթություն ստանալու իրենց իրավունքը, պատերազմի պատճառով հետ չմնալ ուսումնական դասընթացներից:

Արցախի պետական համալսարանի և մյուս համալսարանների բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով առկա և հեռակա համակարգերի սովորող ուսանողները կարող են միանալ Մանկավարժական համալսարանի ուսումնական գործընթացին ըստ համապատասխան ֆակուլտետների և մասնագիտությունների: Նրանք կարող են դիմել Մանկավաժական համալսարանի ֆակուլտետների դեկանատներին՝ միանալով բուհի հեռավար դասընթացներին:

Առկա և հեռակա համակարգերում արդեն բուհի կրթական ծրագրերով սովորում են մի շարք արցախցի ուսանողներ:

Համալսարանի ղեկավարությունն իր պարտքն է համարում հնարավորինս կազմակերպել արցախցի ուսանողների կրթությունը:

...Սիրեք, հարգեք բանակը: Էս տարածաշրջանը բարդ տարածաշրջան է: Աստված գիտի՝ ինչ է լինելու: Ոնց որ թե ավելի կանխատեսելի է, քան 6 տարի առաջ: Քան նույնիսկ 50 տարի առաջ: Մեծ կովկասյան պատերազմ կլինի-չի լինի՝ դժվար է կանխատեսել: Հոտը գալիս է: Պաշտպանության նախարարը դառնա վարչապետ, լրագրողները դառնան պաշտպանության նախարար կամ արդյունաբերության, երկրի առանցքը բանակն է: Բանակ չունեցանք, մեզ ոչ ոք չի հարգելու: Վերջին 10 տարում մեր ստեղծած ամենալուրջ բանը բանակն է: Միակը չէ, բայց ողնաշարն է: Ինչ-որ թերություններ կունենանք, անցողիկ բաներ են, կարևորը՝ զսպանակը, կայացած է: Ու էդ զսպանակի զսպանակը բանակի հրամանատարներն են: Պետությունը նրանց վրա է կանգնում: Սիրեք-չսիրեք, ինչ գրեք-չգրեք, նրանք էս երկրի պետական մարդիկ են: Դառը բան եմ ասելու, կներեք, թե չեք ների, Աստված չեզ հետ: 60 անգամ թուրքը մեզ ավելի լավ գիտի, քան դուք: Մեր բանակի գեներալների արյան մեջ շաքարի տոկոսն էլ նրանք գիտեն, դուք իրարից չեք զանազանում, որովհետև մեր հաղթանակները չեզ համար կարծես թե սովորական բաներ էին: Մտածեք էս երկրի մասին: Մտածեք էս բանակի մասին, սա է էս երկրի փրկությունը: Սա է էսօր, ցավալիորեն ամենակայացած արժեքը: Ցավալիորեն: Մտածեք էս երկրի մասին: Վաղը 21-րդ դարն է սկսվում ու էդ դարը մեր դարը պիտի լինի՝ մեր հաղթանակի, մեր խելքի գալու, մեր միասնության, մեր հաջողության՝ վերջապես:

Վազգեն ՍԱՐԳՍՅԱՆ

Ի գիտություն

«Մանկավարժական համալսարան» թերթի բոլոր համարները կարդացեք բուհի aspu.am կայքում:

ԹՈՒՐՔԵՐԸ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ 1915-1923 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑՆԵԼ ԱՎԱՐՏԻՆ

«Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, Հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»:

Խաչատուր Աբովյան

Ես չգիտեմ՝ ինչու ենք մոռանում համիդյան ջարդերը, 1915-1923-ը ձգված ցեղասպանությունը, ոչ հեռավոր անցյալում Սումգայիթում, Բաքվում, Ադրբեջան կոչված պետության ողջ տարածքում խողխողված մեր հայրենակիցներին, Արցախյան երկարամյա, Ապրիլյան, Տավուշյան պատերազմներն ու փորձում ենք հավատալ թուրքին: Մեծ հայրենասեր Գարեգին Նժդեհը մեզ զգուշացնում էր. ներել թուրքի մի սխալը, նշանակում է թույլ տալ, որ նա հայի նկատմամբ գործի տասը նոր սխալ: Վերջերս նորից կարդացի Ավ. Իսահակյանի հուշերը Ղևոնդ Ալիշանի մասին:

Վերջինս հրաժեշտից առաջ հիշեցնում է, որ հայերն իրենց հույսը դնեն իրենց վրա և չխաբվեն թուրքին: Նույն միտքը կա Ֆրիտյոֆ Նանսենի «Հայաստանը և Մերձավոր Արևելքը» գրքում, որտեղ մեծ մարդասերը պատգամում է, որ հայն իր փրկության ուժը տեսնի միա՛յն իր մեջ:

Այս տարվա սեպտեմբերի 7-ին Լոնդոնում նստող Ադրբեջանի դեսպանը դիմել էր Քերոլայն Քոքսին, որպեսզի հայերին համոզի՝ իրենց վերադարձնել Լեռնային Ղարաբաղը: Քոքսը պատասխանել էր, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստան է, ինչպես որ Հայաստան է Նախիջևանը, ու Լեռնային Ղարաբաղը Կոսովոյի նման պետք է անկախություն ձեռք բերի: Նա հիշեցրել էր հատկապես 1920 թ. հայկական Շուշի քաղաքի ողջ բնակչության ոչնչացումը թուրքերի ձեռքով:

1991-ի մայիսին Հայաստան էր եկել «Նյու-Յորքեր» ամերիկյան հեղինակավոր ամսագրի թղթակից Ռոբերտ Քալոնը, որը Մոսկվայում հանդիպել էր Գորբաչովին, Բաքվում զրուցել Մութալիբովի հետ, հանդիպել Հայաստանի պետական այրերին, գիտնականներին, նաև՝ Սիլվա Կապուտիկյանին: Արդյունքում՝ տպագրել էր 20 էջանոց հայամետ հոդված՝ «Լեռնային Ղարաբաղ, Արմատներ», որտեղ գրում է, թե կոնֆլիկտի միակ ճիշտ բացատրությունն իրեն տվել է Սիլվա Կապուտիկյանը՝ հարցը տանելով դեպի արմատները: Ինչո՞ւ ենք մենք մոռանում, որ Արցախն իր անկախությունը հայտարարել է մինչև Խորհրդային Միության փլուզվելը և ոչ մի վայրկյան չի եղել նոր Ադրբեջանի կազմում: Ինչո՞ւ ենք մոռանում, որ բոլոր օտարազգի հայագետները՝ անցյալի ու ներկայի, միաձայն արձանագրում են, որ Ղարաբաղի մելիքները երբեք չեն ենթարկվել որևէ մահմեդական պետության և ինքնակամ XIX դարի սկզբին, Արևելյան Հայաստանից էլ առաջ, մտել են Ռուսական կայսրության մեջ: Եթե Լենինը, հետո Ստալինը Քեմալ Աթաթուրքի պանթյուրքիստական պլանները բոլշևիկյան ձևով ներկայացնելու պատճառով Լեռնային, Դաշտային Արցախը, Նախիջևանի մարզը, Կարսի հսկայածավալ մարզը հանձնեցին Ադրբեջանին ու Թուրքիային, ապա հիմա չկա Խորհրդային Միությունը. ինչո՞ւ Արցախի անկախությունը չի ճանաչվում:

«Սասունցի Դավիթ» էպոսում կա մի դրվագ. Դավիթը վերաշինում է հոր Մարութա վանքը, սակայն պատերն ամեն օր քանդվում են: Վանքը կանգուն է մնում միայն, երբ նրա հիմքում դրվում է Դավթի սուրը: Այս է ավանդել մեզ մեր ժողովուրդը. երբեք վայր չդնել ինքնապաշտպանական սուրը: Հիշենք նաև Ավետարանի Հիսուսի պատգամը. «Սրով եկողը, սրով կընկնի»:

Մենք պետք է հաղթենք, մենք պարտավոր ենք հաղթել: Արաբական X դարի աղբյուրը վկայում է, որ Գևորգ Մարզպետունին 20 քաջերով հաղթել է Բեշիրի հզոր բանակին:

Ես աղոթում եմ ռազմաճակատում կռվող մեր քաջարի տղամարդկանց, կանանց, Արցախի գեղեցիկ, խաղաղասեր ու աշխատասեր բնակիչների համար:

Աշխարհի տարեգրություններում հազվադեպ երևույթ է, որ մի մարզից ծնվեին այդքան մեծատաղանդ զորահրամանատարներ, մարշալներ, գեներալներ, Խորհրդային Միության հերոսներ, վերջապես՝ ադմիրալ: Այս ճշմարտությունը մեզ հաղթանակելու ուժ է տալու:

Հ.Գ. Ներկայացնում ենք Ռենդ Մքնելլիի «Աշխարհի պատմական ատլասը»՝ հրատարակված ԱՄՆ-ում 1997-ին: Ք.ծ.ա. 120 թվականի քարտեզն է, որտեղ ներկա ամբողջ Ադրբեջանը Հայաստանի տարածքում է, և Թուրքիա ընդհանրապես գոյություն չունի:

Ալլիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
«Գրական թերթ», 09.10.2020թ.

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ էրազմուս+ BOOST (Հայաստանյան բուհերի ռազմավարության և մարկեթինգի խթանում) եռամյա ծրագրի ամփոփիչ համաժողովը: Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ծրագիրը մեկնարկել էր 2016 թվականին՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համակարգմամբ: Ծրագրի հայաստանյան գործընկերներն են Հայաստանի Ամերիկյան համալսարանը, Շիրակի պետական համալսարանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանը, իսկ պետության մասնակցությունն ապահովել են ԿԳՄՍ նախարարությունը, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը: Ծրագրի եվրոպական գործընկերներն են Իսպանիայի Կատալոնիայի պոլիտեխնիկական և Վերգիլիոսի և Ռովիրայի համալսարանները, Էստոնիայի Տալլինի տեխնիկական համալսարանից, Ստոկհոլմի թագավորական տեխնիկական համալսարանը և Լիսաբոնի տեխնիկական համալսարանը: Ծրագրի նպատակն էր խրախուսել ՀՀ բարձրագույն կրթության հետագա միջազգայնացումը՝ մշակելով ազգային և ինստիտուցիոնալ քաղաքականության շրջանակ և գործիքակազմ:

Համաժողովին բացման խոսքով հանդես է եկել ՀՀ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը: Ներկայացնելով համավարակի և պատերազմի պատճառով առկա մարտահրավերները կրթական գործընթացներում՝ նախարարի տեղակալը նշել է, որ նախարարությունը և կրթական հաստատություններն առավելագույն ջանք են գործադրում կրթության իրավունքի իրացման, կրթության շարունակականության ապահովման համար՝ բարեփոխումների օրակարգում առանձնահատուկ կարևորելով բարձրագույն կրթության միջազգայնացմանն ուղղված ծրագիրը: Ա. Մարտիրոսյանը նշել է, որ էրազմուս+ BOOST ծրագրի ձեռքբերումներն զգալի են բարձրագույն կրթության որակի բարելավման և հայաստանյան բուհերի միջազգայնացման առումով, և որ ԿԳՄՍ նախարարությունը հանձնառու է ապահովել ծրագրի շարունակականությունը: Ըստ նախարարի տեղակալի՝ ակնհայտ է, որ կրթության միջազգայնացումն աշխարհում տիրող պանդեմիայի հետևանքով խաթարված է: Փոխելով միջազգայնացման ձևը՝ առաջնահերթությունը տրվելու է «Միջազգայնացում տնից» բաղադրիչին՝ նախկինում լայն կիրառություն ունեցող շարժունության փոխարեն:

Էրազմուս+ գրասենյակի համակարգող Լանա Կառլովան, ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն եվ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Սուքիասյանը և ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր Արա Երեմյանը նույնպես հանդես են եկել ողջույնի խոսքով և շեշտել միջազգայնացման կարևորությունը հատկապես ներկա մարտահրավերների պայմաններում: Այնուհետև ծրագրի համակարգող, ՀՊՄՀ միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Մարիաննա Հարությունյանը ներկայացրել է ծրագրի իրականացման ընթացքը և հիմնական ուղենիշները, ինչպես նաև ցուցադրվել է ծրագրի իրականացման ընթացքը ներկայացնող հոլովակ:

Համաժողովը շարունակվել է ծրագրի ձեռքբերումների ներկայացմամբ. Մասնավորապես Ամերիկյան համալսարանի փոխնախագահի օգնական Անահիտ Օրդյանը և ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն եվ հետբուհական մասնագիտական կրթության վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Ղարիբյանը ներկայացրել են ծրագրի արդյունքում մշակված բարձրագույն կրթության միջազգայնացման հնգամյա ռազմավարությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը: Վանաձորի պետական համալսարանի աշխատակից Գոհար Դոխոլյանը և ՀՊՄՀ միջազգային համագործակցության բաժնի աշխատակից Ռաիսա Ավետյանը ներկայացրել են ծրագրի մյուս աշխատանքային փաթեթների արդյունքները: Ծրագրի շրջանակներում ստեղծված հոլովակը և կայքը կնպաստեն Հայաստանի տեսանելիության բարձրացմանը՝ որպես կրթական ուղղություն, կխթանեն միջազգային ուսանողների հոսքին դեպի Հայաստան: Համաժողովն ամփոփվել է ծրագրի ԵՄ գործընկերների ելույթներով:

Հոկտեմբերի 13-ին տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվել են ծրագրի վերջնական հաշվետվության իրականացման հետ կապված հարցեր, ինչպես նաև կատարվել է ծրագրի վերջնարդյունքների տարածման ուղիների մշակում:



Հեղինակությունն արժանացել է Սոկրատեսի անվան մեդալի

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ Սամվել Խուդոյանի, պրոֆեսոր Սամվել Սուքիասյանի և Նաիրա Հարությունյանի կողմից ԿԳՄՍ նախարարության Գիտության պետական կոմիտեի դրամաշնորհով հրատարակված ռուսերեն «Անձի հոգեբանական պրոբլեմները» (Психологические проблемы личности) համահեղինակությամբ մենագրությունն արժանացել է Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի Սոկրատեսի անվան հոբելյանական մեդալի:

Մենագրության մեջ առաջին անգամ բազմակողմանի հետազոտության են ենթարկվել անձի հոգեբանական պրոբլեմները: Նույն հեղինակները, հետազոտողների միջազգային թիմով (Հայաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Իսրայել), կազմել են աշխարհում առաջին՝ անձի հոգեբանական պրոբլեմների դասակարգման համակարգը («Руководство по диагностике психологических проблем личности»), որի հիման վրա նախատեսվում է մշակել հոգեբանական պրոբլեմնե-

րի ախտորոշման ուղեցույց: Ուղեցույցը հնարավորություն կտա հոգեթերապիայում և ընդհանրապես գործնական հոգեբանության ոլորտում հոգեբանական պրոբլեմների ախտորաշման հարցում միասնական մոտեցում ձևավորել:

Հիշեցնենք նաև, որ հետազոտական թիմը 2019 թվականին նշված հիմնախնդրին նվիրված միջազգային կոնֆերանս էր կազմակերպել, ինչը սկիզբ դրեց գործնական հոգեբանության ոլորտում հոգեբանական պրոբլեմների բազմակողմանի հետազոտությանը և դասակարգման համակարգերի ստեղծմանը (այսօր արդեն ստեղծվել է անձի տարիքային հոգեբանական պրոբլեմների դասակարգման մոդել, որի հիման կկառուցվի համապատասխան դասակարգման-ախտորոշման համակարգ, առանձնացվել են նաև հոգեթերապիայի ոլորտի պրոբլեմները, հետազոտվում են ռազմական և իրավաբանական ոլորտի հոգեբանական պրոբլեմները):

ԴԵՊԻ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողներն իրենց խորը վշտակցությունն են հայտնում բոլոր զոհվածների հարազատներին, զինակիցներին, կուրսընկերներին: Խոնարհվում ենք մերօրյա հերոսների հիշատակի ու նվիրումի առաջ:

ԱԼԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհվել է Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի բաժնի շրջանավարտ Ալեն Մարգարյանը:

Ալեն Մարգարյանը բուհն ավարտել էր նախորդ ուսումնական տարում՝ գերազանց առաջադիմությամբ:

«Ուսումնառության ողջ ընթացքում նրա բեմադրությունները միայն հայրենիքի ու հայրենասիրության մասին էին. ես պարծենում եմ Ալենով»,- ասաց կուրսի ղեկավար Հերբերտ Գասպարյանն ու մտաբերեց՝ Ալենը բոլոր առարկաներն էր գերազանց ստանում, շատ առաջադեմ ու ստեղծագործ երիտասարդ էր:

«Լավագույններին կորցնելու միակ պատասխանը հաղթանակն է, վերջնական հաղթանակը»,- հավելեց Հերբերտ Գասպարյանն ու ափսոսանքով նշեց՝ հայ ազգը կորցրեց տաղանդաշատ ու հայրենասեր երիտասարդի:

Ալենը կարծես կանխազգում էր մոտալուտ մահը. Փետրվարյան վերջին գրառումն է. «Իմ համար վերջացավ, իսկ դուք ձեզ լավ նայեք...»:

ՆՈՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհվել է Գեղարվեստական կրթության ֆակուլտետի շրջանավարտ Նորիկ Գասպարյանը:

Նա բանակ է զորակոչվել այս տարվա ամռանը՝ ավարտելով Մանկավարժական համալսարանի արվեստի տեսություն, պատմություն և կառավարում բաժինը:

ԱՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սոցցանցերում կարդացի հերթական գրառումը. «Մեծ ցավով տեղեկացնում ենք, որ հայրենիքն արիաբար պաշտպանելիս զոհվել է ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանող Արա Խաչատրյանը:

Արա Խաչատրյանը 1-ին կուրսի ուսանող էր, երբ զորակոչվեց ժամկետային զինծառայության: Ծննդավայրը Ակունք գյուղն էր: Ապագա գեղանկարչի երազանքներն անկատար մնացին: Նա դեռ նոր էր կյանքի կոչելու իր ցանկություններն ու մտահղացումները…

Հայրենիքի համար նահատակվեց Արցախի սահմանները պաշտպանելիս, իր երկրային կյանքում հայի արժանապատվությունը բարձր դասելով ամեն ինչից:

ՇԱՀԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհվել է Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի բաժնի 1-ին կուրսի ուսանող, ժամկետային զինծառայող Շահեն Գալստյանը, ով ծառայության էր զորակոչվել 2020 թվականի հունվարին:

Շահենն ուսումնառության ընթացքում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, բարձր կարգապահություն և մեծ պատրաստակամություն է հանդես բերել մասնագիտական առարկաների հանդեպ:

Հանդիսանալով Հայաստանի վաստակավոր կոլեկտիվ «Բերդ» պարային անսամբլի մենակատար պարող, ունենալով պարողին հատուկ բնատուր հատկանիշներ և աշխատասիրություն՝ նա իրեն դրսևորել է որպես ժողովրդական պարերի բացառիկ կատարող: Իր կատարողական բարձր վարպետության և կարգապահության շնորհիվ Շահեն Գալստյանն արժանացել է ինչպես ամբիոնի դասախոսների, այնպես էլ անսամբլի ղեկավարների, պարարվեստի մասնագետների գնահատանքին:



ՀԱՅԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհվել է Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի բաժնի հեռակա ուսուցման համակարգի 2019 թվականի շրջանավարտ Հայկ Գևորգի Նալբանդյանը:

ԳՈՅԱՄԱՐՏ

1.
Բարչունքը մերն է, տողերքը՝ չկան,
Տողերքն ավելի բարչրում մնացին,
Դիպան աստղերին, աստղերը հանգան,
Ու մռմուռ քսվեց մեր ցամաք հացին:
Շահեցի՞ր երկիր, թե՞ կորցրեցիր-
Բարչունքը մերն է, տողերքը... չկան:
2.
Ձեր կյանքի հաշվին ո՞նց եմ ապրելու՝
Մորթապաշտ օրս գինով զրահած,
Ու մթնած հոգուս փչակները խուլ
Ո՞նց բացեմ խինդ ու նվագի առաջ:
Անուններ չտամ- սուրբ են բոլորն էլ,
Իմ պղծությունն եմ առավել զգում,
Պստիկ հոգսերի մեջ եմ մոլորել
Իմ փուչ անցյալն ու
գալիքն անխոստում:
Ինչ-որ կրակ կար՝ համո՛վ, ինքնաբո՛ռբ,
Աստվածաարև ավանդին հլու,
Ես էդ կրակի հաճությանը խորթ՝
Ձեր կյանքի հաշվին ո՞նց եմ ապրելու:
3.
Հողդ չեմ տեսել, ցավդ չեմ կիսել,
Չեմ դարչել զոհ քո
հաղթության համար,
Ոչ էլ կոչեր են շուրթիցս հոսել
Հեղափոխական հարթակին հարմար:
Ու որ իմն ես դու, ու որ քոնն եմ ես՝
Չարակամները չե՛ն հասկանալու,
Բայց պիտի կանգնեն խոնարհ
հարսի պես
Քո դեմ՝ շանթահա՛ր հայացքիդ հլու:
Լույս-մամիկներիդ պայծառ աչքերին
Շղարշ է դառնում ջուրը դառնաղի,
Դեռ ծավալվում է քո քղանցքներին
Տուրուդմփոցը դիվային խաղի:
Ու որ իմն ես դու, ու որ քո՛նն եմ ես,
Ու իմ արյունը՝ քեզ սպեղանի...
Դեռ պիտի փարվի Տիգրան Մեծի՛ պես
Զորավոր շունչը Մա՛յր Հայաստանի:

1993 թվական

ԴԵՊԻ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողներն իրենց խորը վշտակցությունն են հայտնում բոլոր զոհվածների հարազատներին, զինակիցներին, կուրսընկերներին: Խոնարհվում ենք մերօրյա հերոսների հիշատակի ու նվիրումի առաջ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս հերոսացավ նաև Մանկավարժական համալսարանի Կերպարվեստի ֆակուլտետի կերպարվեստ մասնագիտության 2015 թվականի շրջանավարտ Անդրանիկ Գրիգորյանը: Անդրանիկն իր երիտասարդ կյանքը նվիրաբերեց հայրենիքի պաշտպանության սուրբ գործին՝ սերունդներին թողնելով հայրենասիրության և ազգասիրության դրսևորման իր օրինակը:

Զինվո՛րս, ընկար,
Բայց չծնկեցիր թալանչու առաջ,
Նեռը չտեսավ հզոր թիկունքդ, չլսեց հառաչ,
Խրամատի թաց թմբին փարվեցիր,
Որ ծաղիկները չարյունեն հանկարծ:
- Հրամանատա՛ր, էստեղ եմ, ահա՛, նահանջել չկա:
Ու լսվեց զարկը, կրակահերթը քո թնդանոթի:
Վիրավոր Շուշին կարկամեց մի պահ,
Լեռը դղրդաց, ծորերում փռվեց ձայնդ ահարկու,
Ազատարարիդ արյունով գծվեց սահմանը Հայոց,
Եվ երբ գիշերը փռեց թևերը, լույս դարձար մթում,
Լույս, որ տղերքը չմոլորվեն խենթ, դժնդակ մարտում...
Գինն անմահության լոկ կյանքն է, կյա՛նքը,
Այդպե՛ս են կերտվում հաղթությունները դյուցազունների:
Շանթ ու կայծակ են թափվում ու կաթում աչքերիս միջից,
Կսկիծը՝ ցասում, ո՛ւժ է կորուստը,
Եվ տառապանքը՝ վրիժառություն,
Ես ե՛ս չեմ արդեն,
Վահագնի ոգին, վիշապաքաղն է իմ ներսում խոսում...
Քանի՞ երազ կար քո հայացքի մեջ, ի՞նչ բորբ կարոտներ,
Ի՞նչ խոստովանանք, և պատգա՛մ, պատգա՛մ...
Քամին լուր բերեց,
Թե չկրակված տասը փամփուշտ են գտել
Քո զենք ու զրահի միջից,
Խոնա՛րհ հերոսս,
Ուրեմն ես քեզ կյանք պարտք մնացի,
Տաս ասկյարի դի՛,
Տաս որդի և թոռ,
Որի անունը ՎՐԵ՛Ժ կլինի...

Գոհար ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
15.9.2020

ՊՈՂՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ

Գիտեինք, որ մեր թշնամին ուխտադրուժ է, ագահ ու նենգ, բայց երբեք չէինք կարող մտածել, որ հայ ժողովրդի մի ստվար երիտասարդություն զոհ կգնա նրա դաժան նկրտումներին…

Սեպտեմբերի 27-ին ադրբեջանական բանակը հարձակվեց Արցախի պաշտպանական սահմանների վրա: Բայց վախկոտ ազերին այս անգամ մենակ չէ. նրան են միացել Թուրքիան ու միջազգային տարբեր ահաբեկչական խմբեր: Նրանք այս անգամ վճռական են և ուզում են ոչ միայն հայից խլել իր պապենական հողերը, այլև բնաջնջել մի ողջ ժողովրդի, ինչպես դա արեցին 20-րդ դարի սկզբին:

Եվ ահա նոր բոթը. հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհվել է Մանկավարժական համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ինֆորմատիկա մասնագիտության 1-ին կուրսի ուսանող Պողոս Արտյոմի Սարգսյանը: Պողոսը ժամկետային զինծառայող էր, գնացել էր իր պարտքը տալու հայրենիքին:

ՌՈՒԲԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Արցախյան պատերազմի ճակատում հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի պատմության բաժնի առկա ուսուցման համակարգի 2011 թվականի շրջանավարտ Ռուբեն Ավետիքի Գասպարյանը:

Ռուբենը ծնվել է 1988 թվականին Վայոց ձորի մարզի Արենի գյուղում: Երկար տարիներ ուսուցչություն էր անում հայրենի Արենիում: Վերջին տարիներին նա աշխատանքի էր անցել Արենիի համայնքապետարանում:

Գործընկերներն ու աշակերտները, մտերիմները նրան բնորոշում են որպես համեստ ու հայրենասեր երիտասարդ, ով բարձր պատասխանատվության զգացումով էր մոտենում յուրաքանչյուր գործի:

Պատերազմի հենց առաջին օրը՝ սեպտեմբերի 27 ին, Ռուբենը զինվորագրվեց հայրենիքի պաշտպանության գործին: Ավա՜ղ, հոկտեմբերի 17-ը գուժելու էր Ռուբեն Գասպարյանի հերոսաբար զոհվելու լուրը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհվել է Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի շրջանավարտ Հովհաննես Բեյբությանը: Նա բանակ էր զորակոչվել 2019-ի ամռանը՝ ավարտելով ֆակուլտետի իրավագիտություն բաժինը:

Հովհաննեսը միացավ հայ անմահ քաջորդիներին և իր անունն ու օրինակը թողեց համալսարանի պատմության էջերում:

ԱՐՏԱԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Արտակ Բարսեղյանը Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2010 թվականի շրջանավարտ էր, մասնագիտությունը՝ կերպարվեստ: Ուսումնառության տարիներին ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահն էր: Նրան բնորոշ էին հասարակական ակտիվությունն ու մարդասիրությունը, անկախ մասնագիտությունից նա մասնակցում էր ամենատարբեր միջոցառումների, հրաշալի երգում էր:

Պատերազմական օրերին էլ Արտակն օգնություն էր հասցնում Արցախյան պատերազմական ճակատում վիրավորված հայորդիներին: Այս անգամ օգնությունը պիտի հասցներ Գորիսի հոսպիտալ: Այդ մասին գրառում էր արել ֆեյսբուքյան իր էջում: Չհասցրեց... Զոհ դարձավ ողբերգական ավտովթարի:

Արտակ Բարսեղյանի՝ ակտիվ դիրքորոշում ունեցող համալսարանականի հիշատակն ու հայրենիքին անկեղծ նվիրումը վառ կմնա ոչ միայն դասախոսների և ուսանողների հոգիներում, այլև կրթօջախում, որտեղ դասավանդում էր:

Երիտասարդն այնքան իղձեր ուներ, որ չհասցրեց իրականություն դարձնել…

Ապացուցված է, որ գրագիտությունն ավելացնում է հրացանի օգտագործման ճշգրտությունը:

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

«ԱՅՍ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴՆ Է»

Էդգար ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան

90-ականներից սկսված արցախյան շարժումը, որը վերածվեց պատերազմի, վերջին 30 տարիների ընթացքում չէր ավարտվել, ուժեղ կամ թույլ դրսևորումներով ռազմական գործողությունները շարունակվում էին… Սա երրորդ խոշոր պատերազմն է, չհաշված ընթացքում դիվերսիոն ու ռազմական հարձակման փորձերը, դիպուկահարների պատերազմը… Պատերազմը չէր ավարտվել, և այս անգամ թշնամին խնամքով պատրաստվելով, փոխելով ռազմավարությունն ու մարտավարությունը, նաև ստանալով իր մեծ եղբոր՝ Թուրքիայի աջակցությունը, ներդնելով տասնյակ միլիարդավոր դոլարներ ու ստանալով զենք Իսրայելից, վարձկան ջիհադիստ ահաբեկիչներ՝ Սիրիայի տարածքից, իսլամական պետություններ Պակիստանի և Աֆղանստանի բարոյական ու նյութական աջակցությունը, փորձեց հարցը լուծել իր օգտին: Ցավոք, մեծ զոհեր տալով, մենք հերթական անգամ ապացուցեցինք, որ իրադրության տերը մենք ենք, ջախջախելով թշնամուն:

Ռազմական գործողությունները շարունակվում են: Կան տարբեր դիտարկումներ, բայց ես մեր լսարանին և ուսանողներին հորդորում եմ հետևել միայն պաշտոնական տեղեկատվությանը, որովհետև, ի տարբերություն թշնամու, մեր տեղեկատվական դաշտը բաց է, չհաշված ռազմական գաղտնիք պարունակող տեղեկատվությունը, ինֆորմացիոն ճիշտ քաղաքականություն է տարվում և մաքսիմալ ճիշտ է ներկայացվում իրադրությունը: Եվ այս պահին թշնամու՝ արագ հաջողության հասնելու ծրագիրն ուղղակի խափանվել է:

- Ի՞նչը հաշվի չէր առել թշնամին նման լայնածավալ հարձակման դեպքում:

- Գարեգին Նժդեհն ասում է՝ կռվում են բանակները, բայց հաղթում է ոգին, հաղթում են ժողովուրդները: Մենք գիտենք, որ կռվում ենք մեր հայրենիքի համար, որքան էլ թշնամին զինված լինի նոր, ժամանակակից տեխնոլոգիաներով, ընթանում է 5-րդ սերնդի պատերազմ, սա տեխնոլոգիաների պատերազմ է, բայց թշնամին պիտի հասկանա՝ հաղթում է ոգին, հաղթում է այն զինվորը, որը բարձր գիտակցություն ունի հայրենիքի համար մղվող պատերազմում, և երկրորդ, մարդկության պատմության մեջ վարձկանների վրա հույս դրած բանակը երբևէ հաջողության չի հասել, անկախ վարձկանների թվաքանակից ու մարտունակությունից: Որովհետև մարդը, որը կռվում է փողի համար, պարտվելու է ոգով կռվողներին, գումարած նաև Արցախի մեր լեռները, տարածքը…Մեր զինվորը գիտակցում է՝ ինչի համար է կռվում, որ պաշտպանում է թիկունքում թողած իր ընտանիքը, և այդ զինվորին անհնար է հաղթել:

- Արդեն պատերազմի 17-րդ օրն է: Դիվանագիտական տարբեր հարթակներից հնչել են բեկումնային կոչեր, հայտարարություններ. դրանցից որո՞նք կառանձնացնեիք, կամ, եթե կարելի է այսպես ասել, ի՞նչ դիվանագիտական ձեռքբերումներ ունենք:

- Կարծում եմ այդ տեսակետից բավականին արդյունավետ ենք աշխատում և մենք կարողացանք ցույց տալ, որ սա զուտ հայ-ադրբեջանական պատերազմից վերածվել է Թուրքիայի՝ տարածաշրջան ներս մտնելու փորձերի ու ջանքերի, որին աշխարհը բացասաբար արձագանքեց, որովհետև Թուրքիան բոլոր տաք կետերում միջամտում է՝ Սիրիայում, Լիբիայում, Իրաքում… Հիմա արդեն Հարավային Կովկասում:

Մեզ հաջողվեց փաստերը ճիշտ մեսիջներով հասցնել մեծ տերություններին, աշխարհին, միջազգային կառույցներին, և եթե այստեղ իրավիճակը վերահսկողությունից դուրս գա՝ Հարավային Կովկասը կդառնա նոր ահաբեկչության կենտրոն: Իսկ մի քանի հազարի հասնող ահաբեկիչներն այստեղից շատ հանգիստ կարող են ներխուժել Իրան, և Իրանը լուրջ խնդիրներ կարող է ունենալ, որովհետև տարբեր թրքալեզու ժողովուրդներ, բացի այդ, ընդգրկված են Սիրիայի ահաբեկիչներ, որոնք կարող են թափանցել Հյուսիսային Կովկաս: Ոչ վաղ անցյալում մենք գիտենք ահաբեկչական ինչ կառույցներ են գործել այնտեղ, ինչպիսի սպառնալիք են հանդիսացել Ռուսաստանի և տարածաշրջանի համար, և սա, կարծում եմ, մեր տարածաշրջանի խաղացողները, մասնավորապես Ռուսաստանը և Մինսկի խմբի երկրները, ճիշտ հասկացան: Շեշտադրումներն արվում են այդ ուղղությամբ… Բայց, այս բոլորով հանդերձ, խնդիրը լուծում է հայ զինվորը, հայոց բանակը, որովհետև պատմությունը ցույց է տվել, որ երբ գալիս է բանակցությունների, դիվանագտական առուծախի ժամանակը, հստակ առաջնորդվում են իրողություններով՝ որտեղ է կանգնած քո զինվորը: Իսկ մեր զինվորն այսօր գծում է մեր սահմանները: Խորենացին ասում է. «Քաջաց սահմանն իրենց սուրն է», իսկ ես ասում եմ՝ մեր պետության սահմանը մեր զինվորն է: Ունենք մեր մեծ հայրենիքը, պատմական հայրենիքը, բայց փաստացի երկիրը, պետականությունն ավարտվում է այնտեղ, որտեղ կանգնած է հայ զինվորը, որի թիկունքում դու կարող ես հանգիստ կանգնել:

- Այս բախումները, իրավիճակը ևս մեկ անգամ կարևորեցին ուսուցչի դերը, որովհետև զինվորի մարտական ոգու հետևում կանգնած է լավ ուսուցիչը: Այս պահին մենք մանկավարժներ պատրաստող միակ բուհն ենք. որպես պատմաբաններ պատրաստող ֆակուլտետի դեկան՝ կասե՞ք ինչ զինանոցով պիտի պատմության ուսուցիչը մտնի դպրոց, որպեսզի մենք ունենանք այս մարտական ոգու շարունակականությունը:

- Այս պատերազմը հերթական անգամ ապացուցեց, որ նախորդ տարիներին թմբիրի մեջ հայտնված շրջանակների կողմից հնչած, թե ռազմահայրենասիրական դաստիարակությունը շիզոֆրենա է, որ խաղաղասիրության և համակեցության կանոնները պետք է մատուցել դպրոցում, երիցս սխալ է և դեռ դրա ժամանակը չէ: Չկա մի այլ ժողովուրդ, որը հայ ժողովրդից շատ է խաղաղություն ուզում: Սա է մեր տարածաշրջանը, և հայտնի բանաձևը խաղաղություն պարտադրելն է ու պատրաստ լինելը պատերազմին: Տարբեր տեսակետներ հնչեցնողները չեն պատկերացնում ռեալ իրավիճակն այստեղ: Եվ, այո, նորից առաջ է գալիս հայրենասիրական, ռազմահայրենասիրական դաստիարակության հարցը…

Ոչ վաղ անցյալում քննարկվում էին առարկայական չափորոշիչները… Այս հարցերը կարմիր թելի պես անցնելու են բոլոր՝ անգամ բնագիտական առարկաների միջով: մենք այլ տարբերակ չունենք: Սա ցույց է տալիս, որ նախորդ տարիներին որակյալ աշխատանք է արվել, ինչը ապացուցեց՝ մենք սերունդ ունենք, որը պատրաստ է կռվելու: Իսկ կռվողին, ուժեղին հարգում են, հետը հաշվի են նստում, թույլին՝ խղճում: Այս տարիների մեր ամենամեծ ձեռքբերումը անկախության սերունդն էր, որը ծնվել և մեծացել է՝ Հայաստանը պատկերացնելով ազատ և անկախ, սերունդ, որը պատրաստ է այս երկրի համար կռվել մինչև վերջ և զոհել ամենաթանկը՝ իր կյանքը:

Խաղաղ ժամանակ բանակից ոչ պակաս աշխատանք ունի անելու ուսուցիչը: Եվ նա այդ գործը պատվով է անում: Այսօր մեր ուսանողները, որպես կամավորներ ու ժամկետային զինծառայողներ, սահմանին են, պատերազմի դաշտում: Ցավոք, ունենք վիրավորներ ու զոհվածներ: Բայց մենք պետք է պատրաստ լինենք այդ ամենին:

Թերևս պատահական չէր, որ Մաշտոցն իր կյանքի սկզբին զինվորական էր, և հասկացավ, որ զենքից բացի պետք է կռվել նաև գրչով, մտքով, գիտելիքով, և ստեղծեց ստեղծեց հայոց այբուբենը, որն արդեն դարեր պայքարում է մեր ինքնության, մեր տեսակի համար, դաշնակցելով զենքի և ազգի հետ:

- Պարոն Հովհաննիսյան, կանխատեսելը դժվար գործ է, բայց որպես պատմաբան կարո՞ղ եք ասել՝ երբ կավարտվի այս պատերազմը:

- Կոնկրետ այս պատերազմը չեմ կարող ասել երբ կավարտվի, բայց ղարաբաղյան հարցը շուտ չի լուծվելու, շատ բարդ հարց է: Պատերազմին հաջորդող փուլը երկար է տևելու: Եվ մենք նորից պետք է պատրաստ լինենք. ցավոք, սա է իրողությունը: Պետք է անընդհատ ուժեղանանք, շենացնենք մեր բանակը, մեր պետությունը և մեր ուժեղ լինելով անընդհատ պարտադրենք այդ խաղաղությունը: Որքան էլ ցավալի է, միայն այդ ձևով մենք կարող ենք հետաձգել հաջորդ պատերազմը: Ես կուզեցայի ավելի լավատես լինել, բայց հարցը միայն մեր և Ադրբեջանի դաշտում չէ, այստեղ կան տարածաշրջանի այլ խաղացողների շահեր, բախումներ: Երկրորդ տարբերակն այն է, որ կոտրես Ադրբեջանի ողնաշարը և ստիպես, որ նա ճանաչի Արցախի անկախությունը:

- Իսկ Արցախի անկախության միջազգային ճանաչման մասին ի՞նչ կասեք:

- Ինձ համար դա ամենաբարդ հարցն է: Իմ կարծիքով Արցախը պետք է միացվի Հայաստանին, ինչպես նախկինում նախատեսված էր: Այս պահին, ելնելով իրականությունից, միջազգային նորմերից, դիվանագիտական տարբեր բանակցություններից՝ շրջանառվում է Արցախի միջազգային ճանաչման հարցը: Հուսով եմ՝ պատկան մարմինները, ունենալով ամբողջական պատկերացում, հարցը կկարգավորեն ճիշտ ձևով: Իսկ ես մնում եմ իմ կարծիքին, այն է՝ Արցախը Հայաստանի կազմում, մեկ ազգ, մեկ պետություն:



Հարցազրույցը՝
Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

Մենք նույն դեմքով թշնամի ունենք, այն ինչ կատարվում է Արցախում բոլորիս խնդիրն է

Հայաստանում հունական համայնքի դիրքորոշումը՝ կապված Արցախի պատերազմի հետ, ամբողջությամբ համընկնում է հայ ժողովրդի դիրքորոշման հետ: Նման տեսակետ հայտնեց Հայաստանում «Հունական համայնքների միության» ՀԿ նախագահ, ՀՊՄՀ շրջանավարտ Մարիա Լազարևան՝ հավելով, որ Արցախը Հայաստան է:

«Սա մեր հայրենիքն է, մենք այստեղ ծնվել ենք, մեծացել ենք, կրթություն ենք ստացել, մեր մայրենի լեզուն հայերենն է: Մենք մտածում ենք այնպես, ինչպես մտածում է Հայաստանի ժողովրդի մեծամասնությունը»,- ասաց նա:

Մարիա Լազարևան նշեց, որ Հայաստանում հունական համայնքը 1000 հոգի է, Արցախում էլ հունական համայնք կա, սակայն ավելի փոքր՝ մոտ 40 հոգի: Նրա խոսքով՝ հույներն էլ այսօր ծառայում են հայկական բանակում՝ ինչպես ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, իսկ իրենց փոքր համայնքն արդեն իսկ 1 զոհ է տվել:

«Հայաստանի հույներն այսօր անում են այն, ինչ անում են հայերը՝ իրենց ընտանիքներում հյուրընկալում են արցախցիներին, պատանիներն ու երիտասարդները աշխատանքից հետո կամավոր օգնում են պահեստներում, արտադրամասերում, հագուստ, գումար են հավաքում և այլն: Իսկ մեր երկիրը՝ Հունաստանը, առաջին իսկ օրվանից անհանգստացած է, ապրումակցում է, աջակցում է այն պայքարին, որն ունենք: Մենք ունենք միանման պատմություն, միանման ճակատագիր ու նույն դեմքով թշնամի: Այս պահին հունական համայնքի ներկայացուցիչներն ավելի շատ հայ են»,- ընդգծեց Մարիա Լազարևան:

Վերջինս հավելեց, որ իրենք ակտիվ են հունական լրատվամիջոցներում՝ գրեթե ամենօրյա ռեժիմով հարցազրույցներ են տալիս, տեղի իրադարձությունները թարգմանում ու ներկայացնում:

Անի Արամի
NewArmenia.am

Խաչատուր ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՊԵՏՔ Է ՎԵՐԱՀԻՄԱՍՏԱՎՈՐԵՆՔ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ...

Այն, որ այս պատերազմում մենք հաղթելու ենք և արդեն հաղթում ենք, որևէ կասկած չի հարուցում: Բայց հաղթանակն արագացնելու և հաղթելուց հետո այն կրկին անգամ չմսխելու համար պետք է այսօր ևեթ փոխենք ինքներս մեզ:

Պետք է վերահիմաստավորենք մեր աշխարհայացքը՝ հայրենիքը սիրելու և թշնամուն հանդուրժելու, անձնական հարստություն կուտակելու և անկաշառ լինելու, սեփական աթոռը պաշտելու և ինքնազոհողության գնալու և այլ առումներով:

Առանձնակի նրբանակատ պետք է գտնվել մեր հայրենիքի ամեն մի կտոր հողի հանդեպ: Հողապահանջությունը ոչ թե ծաղրի արժանացած հայրենասերների սնապարծ ամբիցիա է, այլ՝ մեր անվտանգությունն ու հարատևությունը երաշխավորող գլխավոր մոտիվացիա: Պետք է մերժվի հայրենասիրությունը ծաղրող ամեն մի շնչող էակ: Այսօր ճակատում, թիկունքում, սփյուռքում մարտնչողը հայի հայրենասեր տեսակն է՝ անկախ իր քաղաքական հայացքներից:

Պետք է վերահիմաստավորենք կրթությունը: Կրթությունը պետք է լինի ոչ թե հանուն կրթության, այլ՝ հանուն հողի, մարդու, հանուն հայի և հայրենիքի հարատևման:

Պետք է վերահիմաստավորենք մեր տնտեսությունը: Տնտեսությունը պետք է լինի ոչ թե հանուն փողի, այլ հանուն անվտանգության, հանուն տեսակի շարունակականության: Հայոց երկրում անմշակ հող չպիտի մնա, առանց հողի գյուղացի չպիտի մնա: Հայոց երկրում ոչ մի չաշխատող գործարան չպիտի մնա: Պիտի ստեղծվեն նորերը, շատերը, հզորները:

Հանուն մեր վաղվա օրվա, հանուն մեր տեսակի շարունակականության, հանուն մեր ՓԱՌԱՎՈՐ ԱՆՄԱՀՆԵՐԻ ՍՈՒՐԲ ՀԻՇԱՏԱԿԻ պարտավոր ենք փոխվել:

Իսկ մինչ այդ և, ընդհանրապես, կեցցե հայոց հաղթական բանակը…

ՕՖԵԼԻ ԴԱԼԱՔՅԱՆ

Քեզ՝ հարազատս

Քո մասին երբեք ոչ մի տող չեմ գրել... դու միշտ իմ ներսում ես, ինչպես շունչս է՝ մինչև կտրվելը, դու իմն ես, ինչպես ճակատագիրս է իմը:

Քո մասին շատերն են գրել ու գրել են շա՜տ գեղեցիկ. հոգի խորովող, աչքից արցունք քամող: Բայց այսօր պիտի գրվես, ների՛ր... Հայրենի՛ք, քեզ խանդում են մայրերը, քեզ նախանձում են սիրած աղջիկները, որովհետև քեզ համար ընկնում են՝ արժանանալով հերոսի կոչման, որ երբեք-երբեք չեն իմանալու այդ մասին: Դու ընկածներին միայն այդ կարող ես «նվիրել», իսկ մայրերի՞ն... նրանց ի՞նչ ունես տալու, որովհետև քեզ համար ընկնում են՝ առանց մայրերին հարցնելու:

Գիտե՞ս, սիրելիդ իմ, ոչ ոք գիտակցված չի գնում հերոսության, նրանք հերոսանում են ակամա՝ գրպանած կիսատ երազանքներ: Մայրը հերոս չի ծնում, նա թաղում է հերոս:

Ների՛ր, որ այսքան խիստ եմ, պարզապես քեզ կորցնելու վախն է ստիպում այսքան թուլանալ, այսքան կառչել սահմաններիդ, գրկել, որ ձեռքիցս չտանեն..., որ կում-կում կուլ չտամ արցունքներս: Երբեք խաղաղությունն այսքան չէր երերացել ոտքիս տակ, այսքան մոտ չէի զգացել պատերազմը. կարծել եմ, որ այդ չարիքը անցյալում պիտի լիներ՝ ամրագրված դասագրքերում, որ հերոսները միայն գրքերից ժպտացող խաղաղ դեմքերն են, որ միս ու արյունից չեն, բայց, սիրելի՛ս, խե՛ղճս, հպա՛րտս, հերն ու մերս, բայց ոչ այս քաղաքակիրթ լուսավոր դարում, քեզ չի սազում ընկնել: Հայրենի՛ք դու շատ հպարտ ես, դու սիրուհի ես, ում համար խենթանում են, խելքները թռցնում՝ մոռանալով տուն-տեղ, ընտանիք:

Երբեք չէի մտածի, որ քեզ համար արյունակիցս, միակս իրեն կդնի ոտքերիդ տակ: Վստահ էի, որ կշրջանցես ինձ, բայց խաղաղությունդ ավելի է թանկանում, երբ եղբայրս է քեզ համար կռվում, ու ես դառնում եմ ուժեղ՝ լացս խեղդելով, մորս հույս տալով: Եվ ամենից բարձր ձայնով ես եմ ծիծաղում, որ թշնամիդ խեղդվի չարությունից, որ քեզ համար քույրերն էլ իրենց չեն խնայում. բարձր ծիծաղում եմ, որ ես էլ հավատամ իմ ուժին, որ չգժվեմ, Հայրենի՛ք, որովհետև քեզ համար նաև խելագարվում են:

Հայրենիքս, սա քո կռիվը չէ. վերջում, ի վերջո, ծնկի ենք գալու բոլորս Նրա առաջ, որ Նա վերադարձնի քեզ ու քո հերոսներին, որովհետև սա Նրա կռիվն է, Նրա հավատի ու սիրո?ոչինչ չի տրվում հենց այնպես. «Հավատո՞ւմ եք, որ Ես կարող եմ ձեր աչքերը բանալ»: Եվ չպարգևեց նրանց աչքի լույս, Մինչև հավատի գրավ չստացավ (Նարեկ, Բան ԺԱ): Ուրեմն, այս հերոսները մեր գրա՞վն էին, մեր մե՞ղքն էին, որ պիտի իրենց ուսերին տանեին: Նրանք մեր ու երկնքի միջև եղած բարությունն են, մեր նեռումն են:

Ների՛ր ինձ, Հայրենի՛ք, քեզ այսքան սիրելու, այսքան իմը համարելուս համար, ուրիշ ո՞ւմ հետ կարող էի այսքան անկեղծանալ, ո՞վ կլսեր ու կներեր, բայց բավ է այսքան հերոսներ ունենաս, մի կողմ դիր հպարտությունդ, քանզի քեզ համար ապրելն ավելի գեղեցիկ է ու հերոսկան,քան մեռնելը, բավ է, ես հանձնվում եմ, Հայրենիք, այլևս չեմ կարողանում բարձրաձայն ծիծաղել:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԴՊՐՈՑՈՒՄ

Հայ ժողովրդի պատմության համար այս ճակատագրական ժամանակաշրջանում ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում աշակերտների և ծնողների հետ անցկացվեց հերթական ուսումնական օրը, որը ճանաչողական և դաստիարակչական բնույթ ուներ: Այն նվիրված էր Թարգմանչաց տոնին և Հայոց այբուբենի օրվան, որոնք ամեն տարի նշվում են Հայաստանում հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը:

Օրվա բանախոսը կառավարման սոցիոլոգիայի ոլորտի փորձագետ, մասնագիտական գիտական հրապարակումների հեղինակ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Պոլինա Սապանիդին էր, ով հանդես եկավ ճանաչողական հետաքրքիր ելույթով՝ նվիրված հայ գրերի գյուտին և քրիստոնեության ծագմանը: Հավելենք, որ տիկին Սապանիդիի երեխաները՝ Ռադան և Զոյան, հաջողությամբ ուսանել են «Վերածնունդ» դպրոցում:

Հետաքրքիր էր հայագիտության ուսուցչուհի Քնարիկ Վարդանյանի զեկուցումը Մեսրոպ Մաշտոցի, Կորյունի, Եղիշեի, Եզնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու մասին, իսկ երաժշտության ուսուցչուհի Արփինե Սամվելյանը ներկայացրեց, թե ինչ է հայրենասիրական երգը՝ ընդգծելով նրա դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Բաց դասն ավարտվեց հայրենասիրական երգերի կատարումներով:

Ուսումնական օրն ամփոփեց դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանը:

ՃԱՂԿԵԼՈ՛Ւ ԵՆ ՆՌՆԵՆԻՆԵՐԸ

Կործանեցե՛ք Հայաստանը: Տեսեք՝ կստացվի՞: Հանեք տներից, ուղարկե՛ք անապատները: Թողե՛ք առանց հաց ու ջրի: Կրակի՛ մատնեք տներն ու եկեղեցիները: Տեսեք՝ նորից չե՞ն ապրի: Տեսեք՝ նրանց ցեղը դարձյալ չպիտի՞ հառնի, երբ քսան տարի հետո երկու հոգի հանդիպեն գարեջրատանն ու ծիծաղեն ու խոսեն իրենց մայրենի լեզվով: Դե՛, տեսեք՝ կկարողանա՞ք արգելել, որ նրանք ծաղրեն ձեր մե՜ծ-մե՜ծ գաղափարները, շա՛ն տղերք, որ երկու հայ խոսեն աշխարհում: Դե՛, փորձեևք կործանել նրանց:

Վիլյամ Սարոյան

Դարեր շարունակ փորձում են, և նրանց յուրաքանչյուր փորձ ջախջախիչ պարտությամբ է ավարտվում. մենք էլի ծիծաղում, աղոթում ու հայհոյում ենք մեր մայրենիով, մենք էլի՛ ապրում ենք:

Թանգարանային մեկ օրինակ էին ուզում թողնել մեզնից: Բայց մենք՝ հանդուգն, համառ, կենսասեր, ապրող, նոր ծիլեր տվեցինք Ֆրեզնոյում, Նյու Յորքում, Փարիզում, Կալիֆոռնիայում ու աշխարհի տարբեր քաղաքներում, նահանգներում, երկրներում: Մենք տարածեցինք մեր մշակույթը, պահպանեցինք մեր ազգային էությունը, որովհետև ինչպես ասել է. «մեր հայրենիքում մեզ սպանեցին, սակայն չսպանվեց հայրենիքը մեր մեջ»:

Հայը չի զոհվում, չի նահատակվում, չի տեղահանվում, չի մորթվում. նա ասուպ է դառնում քաղաքակիրթ աշխարհի քաղաքների երկինքներում, որ լուսավորի մարդկանց միտքն ու լիացնի մարդկությանը:

Այդ հայը Վիլյամ Սարոյանն է:

Այդ հայը Շառլ Ազնավուրն է:

Այդ հայը Վահան Թեքեյանն է:

Այդ հայը Կոստան Զարյանն է:

Այդ հայը Սփյուռքում ապրող հացթուխն է:

Այդ հայը Սփյուռքում ապրող ուսուցիչն է... այդ հայերը շատ են:

Ֆրեզնոյի սալիկապատ փողոցները խորթ մնացին Սարոյանի՝ բիբլիսյան քար ու քռայով փողոցների հայկականությամբ լցված հոգուն: Չէր տեսել Արևմտյան Հայաստանը, բայց ծնողներից ժառանգել էր հայեցիությունն ամենամեծ աշխարհաքաղաքացիներից մեկը՝ Վիլյամ Սարոյանը: Ինքն էր ասում, որ թեև լեզուն անգլերենն է, բայց ոգին, որ ստիպում է գրել, հայկական է: Նա ինքը բոլոր հայերին ուղղած իր կոչին հավատարիմ մնաց. «ուր էլ լինես՝ պոռա Հայաստա՛ն»: Ու գոռաց ի՛նքը:

Ազգապահպանության կարևորագույն լծակները երկուսն են Սարոյանի համար՝ հայրենիքը և ոգին: Ահա նրա հերոսը: Զանասիրաբար նռնենիներ է տնկում օտար ափերում: Չորանում են, նորն է տնկում: Նռնենին հայության խորհրդանիշն է, հատիկները՝ աշխարհասփյուռ հայերի: Սարոյանը մեկ այլ գում է փորձում հավաքել բոլորին:

Օտար ափերում ոգին է, հայկական սովորույթները, ավանդույթները, մշակույթն են պահում, ազգային ինքնությունը: Իսկ այդ ոգու սնուցման միակ աղբյուրը Հայաստանն է: Կա Հայաստանը, որ ուժ է տալու աշխարհասփյուռ հայությանը, Սարոյանի հերոսներին՝ իր քեռիներին, որ նոր Հայաստան ստեղծելու ճանապարհներ են փնտրում ու հավատում են՝ ծաղկելո՛ւ են նռնենիները:

38 լեզուներով թարգմանված Վիլյամ Սարոյանի էջերում մնաց Բիբլիսի քարտեզը («Հայկական եռագրություն»), որ նրան ապրելու, արարելու գեն էր փոխանցել:

Նույն Կալիֆոռնիայում ազգապահպանության զենք վերցրեց նաև Լևոն-Զավեն Սյուրմելյանը, ում բարձրաձայնած խնդիրը, ցավը դեռ այսօր էլ մեզ հանգիստ չի տալիս: Տպագրվեց նրա «Ձեզ եմ դիմում, տիկիննե՛ր և պարոնե՛ր» վեպը: Սա բողոքի ձայն էր աշխարհին, որ լուռ ու կույր մնաց դարի մեծագույն ոճրագործության հանդեպ: Նա հավատացած էր, որ իրենք՝ վերապրողներն, ավելի ուժեղ են, և վշտի մեծությունն ունի նաև վշտի ուժի՝ մեծությունը: Նա ոչ միայն գեղարվեստական երկ ստեղծեց, այլև վավերագրական, որ ճշմարտացիորեն բոլոր փաստարկներով ներկայացնում է պատմական իրողությունը: Հեղինակը համաձայն է գրչակից ընկերոջ հետ. Սփյուռքում հային ապրեցնողը հայկական ոգին է, ազգային հոգեբանությունը, ազգային արժանապատվությունը: Սյուրմելյանը եկավ մեր ակունքներին, որովհետև վերապրումը սկսվում է նախածննդից: Նա անգլերեն թարգմանեց հայկական հեքիաթներն ու դյուցազնավեպը:

Ճանաչենք մերօրյա գրող Փիթեր Բալաքյանին, նույնպես ծնված ԱՄՆ-ում: Նա ևս փորձեց թարմացնել աշխարհի ջնջված հիշողությունը: Ահա նրա «Ճակատագրի սև շունը», «Պայծառ տխուր օրերը»: Նա գրում է հուշագրությունն իր երկրի, որ երբեք չի տեսել: Նրա համար հայրենիքի խորհրդանիշը տատն է: Տատն ու երկիրը նույն դիմանկարն ունեն. նա տատի դեմքով ճանաչում է իր հայրենիքը. «Այն առկա էր իմ տատի կերպարով: Ինչ որ էր այդ երկիրը՝ ուրեմն հենց տատս էր, ուրեմն՝ հենց երկիրն էր»: Տատի մահից հետո հատկապես նրա պատմածները կաթիլ առ կաթիլ ապրողների մեջ լցնում են հայկականությունը: Տատը պատմություններ էր պատմում, որ ժամանակ ու տարածություն չէին մատնանշում. մենք հավերժի ճամփորդներ ենք:

Փիթերը Բալաքյան գերդաստանում միակը չէ, որ հասել է հաջողության: Այդ ընտանիքը մտավորականներ ծնեց, որ պահպանում են պատմական հիշողությունը, ինքնությունը, ժառանգել են արարման գենը:

Մեր քարտեզը մեզ տանում է դեպի Փարիզ: Շատերիս է հուզել «Մայրիկ» ֆիլմը, նաև Անրի Վեռնոյի համանուն վեպը, որի կենտրոնում այն հայն է, որ, հեղաբեկումները հաղթահարելով, իրեն փորձում է գտնել նոր աշխարհի, նոր կեցության մեջ: Եվ գտնո՛ւմ է: Նրա տարագրված հերոսները դիմադրող հայերն են: Օտար միջավայրին դիմադրող, որ պահպանեն իրենց: Սա, ըստ էության, կենսագրական վեպ է, որը, սակայն, ոչ թե անձի, այլ ամբողջ ազգի կենսագրությունն է: Նա հավատացած էր, որ միշտ էլ մի տեղ փրկության խարիսխ կա: Ինքը վեպում մեջբերում է Բենեդիկտոս 15-րդի խոսքերը. «Թող բոլորը քաջ գիտենան, որ ազգերը չեն մեռնում»: Սրանով փաստում է աշխարհին ու հավատցնում՝ ապրելո՛ւ ենք:

Եվ ահա բեմում է Շառլը: Ազնավուրն ինքը մի առիթով խոստովանում է, որ իրեն սնել է հատկապես հայկական բանաստեղծական ժողովրդական տարերքը: Եվս մեկ աշխարհաքաղաքացի, ով երգեց ինչպես մարդու, սիրո, կյանքի հմայքների մասին, այնպես էլ սեփական ժողովրդի անցյալի, վշտի, ապրելու իրավունքի մասին: Ահա նրա հերոսը՝ տնանկ մի մարդ (ինչպես սփյուռքի բոլոր հայերը), որ կորցրել է «մեծ տունը»: Նա վախենում է իր տունը մտնել, որովհետև անցյալն է ապրում այնտեղ, որովհետև այդ անցյալում շատերն ընկան՝ հայացքներն Աստծուն հառած: Չնայած իր ստեղծագործություններում խոսում է հայի ազգային հիշողության ու կոտորածի մասին, սակայն նա այդ ամենը դուրս է հանում նեղ սահմաններից ու խնդիրը ներկայացնում հումանիզմի իրավունքների պաշտպանության համատեքստում: Ոճրագործությունը չարիք է, որ չպատժելու ու չկանխելու դեպքում աշխարհի?ն է սպառնալու, ոչ թե միայն հային: Նրա՝ «Քեզ համար, Հայաստան»-ը սոսկ բանաստեղծական տող չէր. նրա ապրելն էլ ու ապրելուց հետո էլ անգամ Հայաստանի համար էր:

Մենք վերածնվել ենք Սփյուռքում, որտեղ չունենք պատմական հող: Բայց մեզ վերածնվելու համար պետք էր գիտակցություն, որովհետև հայրենիքը մեր մեջ է ապրում: Նրանք, ում մասին գրեցի և չգրեցի, իրենց գրչով, երգով, արարման կարողությամբ արթուն են պահում ազգային հիշողությունը ու մեզ հասցնում համամարդկային մշակույթի լայն տիրույթներ:

Ուրեմն աշխարհը լավ կանի՝ Սահյանին լսի ու աչքն իր խղճի վրա պահի: Թե չէ մենք աշխարհի որ ծայրի գարեջրատանն էլ լինենք ու մեր հորինած գարեջուրն էլ խմենք, հայերե՛ն ենք ծիծաղելու, հայհոյելու, ապրելու:

Վանուհի ԲԱՂՐԱՄՅԱՆ

Խաչիկ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սուրո՛ւմ են,
Շաչո՛ւմ են,
Պայթո՛ւմ են արկերը,
Պարելով բերում են կրա՛կ ու մա՛հ.
Երկնքից կանչում է
Հրազարդ լապտերը,
Կարմրածոր պատկերներ
Կշաղի հիմա:
Կանգնե՛լ են քաջերը,
Մահաբեր անձրև է,
Շրխկան մտրակը
Իջնում է վա՛ր,
Բայց քաջի՛ ոգու դեմ
Մահը պապանձվե՛լ է,
Մահվանը հաղթե՛լ է
Ձինվո՛րը հայ:

***

Մարդկություն չկա, նյութեղ շահեր են,
Հոգիներում՝ նենգ դատարկություն,
Ճարտասանների պարապ բառեր են,
Խորքում քողարկած ծաղր ու թույն:
Ծուխ ու փոշու մեջ լույսդ մարե՛լ են,
Եվ քո արևն էլ քեզ չի՛ շողում
Դավաճաններդ քեզ ավարե՛լ են,
Հերոսների՛դ ես հիմա թաղում:

Լիլյա ՄԱՇԻՆՅԱՆ

Երգը մի վայրկյանում փոխվեց զենքի,
Եվ երազը աստղե մրմուռ դարձավ,
Չկա՞ սպեղանի էս մեր վերքին,
Քո մեջ կտոր աստված չկա՞, աշխարհ...
Քաղաքներով ձգված երթերաշարք,
Աչքս՝ պատասխանի վազող տողին,
Քանի՜ դար դեռ պիտի ձեր դուռը գանք,
Որ շնչելու օդ տաք, մեր իսկ հողին...
Ի՞նչը վրիպեցինք, ի՞նչ բաց թողինք,
Լրացնելու ստույգ պահն էլ հասավ,
Արդարություն, արծաթով քեզ ծախող
Էս ինչքա՜ն ուրացող Հուդա տեսա:
Ու որ՝ զարթնես գրկից Մորփեոսի,
Հիշիր, մոլորա՛կ, կա՛ հայ ու Արցախ,
Էդ արծաթով կյանք չի հարահոսի,
Երբ վաղը դո՛ւ լինես «կեռ թրի» տակ:

***

Որի՞դ չգրած տողերը գրեմ,
Որի՞դ երազը հասցնեմ գալիք,
Էս պատերազմը երգով ու՞ր հրեմ,
Պոետ տղաներ, լավեր, ետ գայիք...
Որի՞դ չգտած նոտան որոնեմ,
Որ խեղճ դուդուկը լոկ չհմայի,
Երաժիշտ տղերք, ձեզ հետ ի՞նչ տոն էր,
Ուրախ մեղեդո՛վ երանի գայիք...
Որի՞դ երկնքի գույները ընտրեմ,
Խառնեմ հետոյի խաղաղ կտավին,
Նկարի՛չ տղերք, մի հնար գտեք,
Որ վրիպեք դև թուրքի գնդակից...
Ձեր էջերի մեջ սրտեր եմ դնում,
Որ տեսնեիք ու չնոսրանայիք,
Աստղացա՜ծ տղերք, որտե՞ղ եք... ու՞ր եք...
Էլ ի՞նչ անեմ ես, որ դուք ետ գայիք...
Որի՞դ մայրերին, որի՞դ սերերին,
Ո՞ր հույսի երգով, ո՞նց մխիթարեմ,
Մեր ծաղիկ տղերք, մեր գիտակ այրեր,
Որ մատաղվել եք մտքի խավարին...
Չգիտես՝ լռես, չգիտես՝ խոսես,
Գրի՛չ, ո՜նց կուզեմ նռնակ դառնայիր,
Աշխարհի ցավը պատրաստ եմ ուսել,
Մենակ, իմ լավեր, հաղթած դառնայիք...

Ջոն ԹՈՐՈՍՅԱՆ

Չեմ հավատում թուրքի խոսքին,
Երդումներին աննյութ ու եղծ,
Նա կարող է հալալ ոսկին
Վաղն անվանի հարամ ու կեղծ...
Նա չի սիրում գործը շիտակ,
Արևն անգամ խորթ է նրան,
Կիսալուսնի ստվերի տակ
Քանի՞ մաշկ է քաշել վրան...
Մեկը՝ կարմիր, մեկը՝ ճերմակ,
Որ իր ներսի սևը փակի,
Որ արևի շողերի տակ
Չնկատես դևն իր տակի...
Չեմ հավատում խոսքին թուրքի,
Աղերսներին խոնարհ ու խեղճ,
Աստված չանի ելնի ոտքի,
Կհոշոտի քեզ հողի մեջ...

ՊՐԱԿՏԻԿ ԴԱՍ ԷԿԶՈՏԱՐԻՈՒՄՈՒՄ

Հոկտեմբերի 16-ին Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի կենսաբանության բաժնի երկրորդ կուրսի ուսանողները կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանի գլխավորությամբ այցելեցին «Զուլանդիա» էկզոտարիում, որտեղ իրականացրին սողունների թեմայով պրակտիկ դաս:

Ուսանողները հնարավորություն ունեցան անմիջական շփում ունենալ կենդանիների հետ, որը նրանց տվեց թե՛ գիտելիքներ, թե՛ տարբեր զգացողություններ: Սամվել Պիպոյանը ներկայացրեց կենդանիների մասին տարբեր մանրամասներ, միաժամանակ պատասխանեց ուսանողներին հուզող հարցերին:

«Էկզոտարիում» ՍՊԸ-ի տնօրեն Կարեն Մարտիրոսյանն ուսանողներին սովորեցրեց տարբերել թունավոր և ոչ թունավոր օձերին և նրանց խայթելուց հետո առաջին օգնություն ցուցաբերելու կանոններին՝ հիշեցնելով, որ օձերը երբեք նախահարձակ չեն լինում, և նրանցից պաշտպանվելու լավագույն միջոցը հնարավորինս հեռու մնալն է:

«Զուլանդիա» էկզոտարիումը հիմնել է Կարեն Մարտիրոսյանը, ով մեզ հետ զրուցելիս նշեց, որ կենդանիների հանդեպ սերն իր մոտ առաջացել է դեռևս մանկուց ու դեռ փոքր տարիքում ուներ սողունների հավաքածու: Տարիների հետ իր հավաքածուն ընդլայնվել է, և տանը հաճախ այցելուներ են եկել կենդանիներին տեսնելու նպատակով: Ահա ինչու նա նմանատիպ կազմակերպություն հիմնելու որոշում է կայացրել և որոշակի ժամանակ անց այդ ամենն իրականություն է դարձրել:

Այժմ «Զուլանդիա» էկզոտարիումը ոչ միայն փոքրերի, այլև մեծերի սիրելի վայրերից մեկն է, որտեղ տիրում է ջերմ ու բարի մթնոլորտ, իսկ ապակիներից այն կողմ կատարվում է հսկայական աշխատանք:

Մենք էլ սիրեցինք այդ վայրը և հեռացանք՝ կրկին վերադառնալու ակնկալիքով:



Այս օրերին աշխարհասփյուռ հայերը բողոքի ցույցեր ու երթեր են կազմակերպում աշխարհի տարբեր երկրներում: Նրանց են միանում երեխաները, որոնք հավատարիմ են իրենց հայ արմատներին: Նկարի և տեքստի հեղինակները ԱՄՆ-ում բնակվող գրող, արմատներով արցախցի Մարգարետ Դերանցի թոռներն են: Երեխաները թեև ծնվել են Միացյալ նահանգներում, բայց հայաշունչ դաստիարակություն են ստանում:

Հալեպի Մխիթարյան վարժարանի սաների առօրյան անցնում է հայաշունչ միջոցառումների կազմակերպմամբ:

Արցախցի երեխաները ապաստարանում անգամ սովորում են:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 21.10.2020 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ